IDBank

2023

ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Բովանդակություն

01 Բանկի մասին համառոտ

IDBank-ը մեկ հայացքով 04

Բանկի կառավարման մարմինները 05

Բանկի առաքելությունը, տեսլականը, արժեքները 06

Բանկը որպես հաշվետու թողարկող 07

02 Մակրոտնտեսական ակնարկ

ՀՀ տնտեսությունը 09

ՀՀ ֆինանսական համակարգը 10

03 Ֆինանսական հաշվետվություն

Ֆինանսական արդյունքների ամփոփում 12

Ֆինանսական հաշվետվություններ 14

04 Ռազմավարական հաշվետվություն

Ռազմավարական ծրագրերի իրագործում 19

Կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն 20

05 Ռիսկերի կառավարում

Հիմնական տնտեսական նորմատիվներ 22

Ռիսկերի կառավարման հիմնական մոտեցումներ 23

06 Պատասխանատու անձանց հայտարարություն 25

1

Բանկի մասին համառոտ

IDBank-ը մեկ հայացքով 04

Բանկի կառավարման մարմինները 06

Բանկի առաքելությունը, տեսլականը, արժեքները 07

Բանկը որպես հաշվետու թողարկող 08

IDBank-ը մեկ հայացքով

2023թ. 1-ին կիսամյակի արդյունքներով

- Ակտիվների **3.1%** աճ*
- Զուտ շահույթի **21.2%****
- Կապիտալի համարժեքության բարձր մակարդակ (**26.2%**)

Ակտիվներ	**319 մլրդ**
Պարտավորություններ	**252 մլրդ**
Ավանդներ, Հաշիվեր	**209 մլրդ**
Կապիտալ	**67 մլրդ**
Զուտ շահույթ	**7,6 մլրդ**

Moody's վարկանիշ

B2 – երկարաժամկետ տեղական և արտարժույթով ավանդներ

Հեռանկար - կայուն

Հայաստանում անկանխիկ վճարումների ավելին քան **35%-ի** ապահովում

- Ակտիվ հաճախորդների մոտ **11% աճ**
- Թվային հարթակում ակտիվ հաճախորդների **14% աճ**

- Թողարկված քարտերի քանակի **10% աճ***
- Քարտերով վճարումների մոտ **251% աճ****

Հաճախորդներ	**550 հազ.**
Քարտեր	**367 հազ.**
Մասնաճյուղեր	**13**
Աշխատակիցներ	**750**
Թվային հարթակում գրանցված ակտիվ հաճախորդներ	**80.3%**
"Գնիր հիմա, վճարիր հետո" 0%-ով POS տերմինալներ	**5900**

*Աճերը ներկայացված են 2022թ. տարեվերջի նկատմամբ
** Աճերը ներկայացված են 2022թ.-ի 1-ին կիսամյակի նկատմամբ

Բանկի կառավարման մարմինները

Բանկի խորհուրդը

Վարդան Դիլանյան

Խորհրդի նախագահ

Կարեն Մարգարյան

Խորհրդի անդամ

Ալեքսեյ Կոմար

Խորհրդի անդամ

Ավետ Միրաքյան

Խորհրդի անդամ

Արթուր Ջավադյան

Խորհրդի անդամ

Բանկի բաժնետերերը



Բանկի վարչությունը

Միեր Աբրահամյան

Վարչության նախագահ

Կարեն Նալբանդյան

Բիզնեսի զարգացման տնօրեն,

Վարչության անդամ

Սերգեյ Առաքելյան

Թվային Բանկինգի տնօրեն,

Վարչության անդամ

Անուշիկ Խաչատրյան

Գլխավոր հաշվապահ,

Վարչության անդամ

Արման Ասատրյան

Ֆինանսական տնօրեն,

Վարչության անդամ

Ռաֆիկ Սուվարյան

Ռիսկերի կառավարման գծով տնօրեն,

Վարչության անդամ

Տիգրան Մխիթարյան

Կորպորատիվ բիզնեսի տնօրեն,

Վարչության անդամ

Լիլիթ Գրիգորյան

Գործառնական տնօրեն,

Վարչության անդամ

Բանկի առաքելությունը, տեսլականը, արժեքները

Բանկի առաքելությունը

Լինել առաջին ընտրության բանկ մեր հաճախորդների համար՝ որպես Հայաստանի լավագույն նորարար բանկ:

Բանկի տեսլականը

Դառնալ առաջատար թվային բանկ՝ ընդլայնելով մեր նորարարական, հաճախորդամետ գործունեությունը:

Բանկի արժեքները

Մենք նորարար ենք – Մեր առաջնային նպատակներից է հաճախորդներին որակյալ, արագ և առանց սահմանների բանկային ծառայությունների մատուցումը՝ բաց և նորարարական թվային հարթակի միջոցով:

Մենք թափանցիկ ենք – Մենք շարունակական ջանքեր ենք գործադրում, որպեսզի առավել թափանցիկ լինենք մեր հաճախորդների, ներդրողների, գործընկերների և բաժնետերերի հետ հարաբերություններում:

Մենք վստահելի ենք – Մենք կարևորում ենք մեր շահառուների տվյալների անվտանգ պահպանությունը՝ մեծ ռեսուրսներ ներդնելով դրանք կիբերհարձակումներից և այլ սպառնալիքներից պաշտպանելու համար:

Մենք հավատարիմ ենք – Մենք մեր հաճախորդների կողքին կլինենք կյանքի և՛ լավ, և՛ վատ պահերին՝ ստեղծելով հաճախորդամետ էկոհամակարգ նրանց պահանջմունքների շուրջ:

Մենք թիմային ենք – Մենք խրախուսում ենք մեր աշխատակիցների նորարարական մոտեցումները և համոզված ենք, որ միայն թիմային ջանքերով է հնարավոր հասնել գերազանց արդյունքների:

Բանկը որպես հաշվետու թողարկող

Բանկն իր պատմության ընթացքում առաջին անգամ թողարկել և տեղաբաշխել է պարտատոմսեր 2016 թվականին: Բանկի կողմից պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման նպատակն է միջոցների ներգրավումը, որոնք ուղղվում են Բանկի հիմնական գործունեության ֆինանսավորմանը:

2023 թվականի 1-ին կիսամյակի վերջի դրությամբ երկրորդային շուկայում շրջանառվում են IDBank-ի կողմից իրականացված 9 թողարկումների պարտատոմսերը, որոնց ընդհանուր ծավալը կազմում է 30.1 մլն ԱՄՆ դոլար և 2.0 մլրդ ՀՀ դրամ:

Բոլոր պարտատոմսերը թողարկվել են 27 ամիս ժամկետայնությամբ և արժեկտրոնի վճարման եռամսյակային պարբերականությամբ:

Թողարկված պարտատոմսեր (մլրդ ՀՀ դրամ)



Պարտատոմսերում ներդրողների ռիսկերի գծով էական փոփոխություններ չեն արձանագրվել

Պարտատոմս ձեռք բերելիս ներդրողը հիմնականում կրում է հետևյալ ռիսկերը՝

- ✓Շուկայական ռիսկ (Տոկոսադրույքի ռիսկ, Արտարժութային ռիսկ և այլն),
- ✓Պարտատոմսերի իրացվելիության ռիսկ,
- ✓Գնաճի ռիսկ

30/06/2023թ դրությամբ շուկայում ներդրողի ռիսկերի գծով էական փոփոխություններ չեն արձանագրվել:

2

Մակրոտնտեսական ակնարկ

ՀՀ տնտեսությունը 09

ՀՀ ֆինանսական համակարգը 10

ՀՀ տնտեսությունը

Տնտեսական ակտիվության ցուցանիշ



Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե

Գնաճ (տարեկան,%)*



Աղբյուր՝ ՀՀ ԿԲ

Միջին փոխարժեքներ



Աղբյուր՝ ՀՀ ԿԲ

Վերաֆինանսավորման դրույքաչափ (%)



Աղբյուր՝ ՀՀ ԿԲ

*Նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ

ՀՀ ֆինանսական համակարգը

Բանկերի վարկերը ըստ արժույթների, մլրդ ՀՀ դրամ



Բանկերի ավանդները (ներառյալ՝ հաշիվները) ըստ արժույթների, մլրդ ՀՀ դրամ



1 տարուց ավելի ժամկետայնությամբ ավանդների միջին տոկոսադրույք



1 տարուց ավելի ժամկետայնությամբ վարկերի միջին տոկոսադրույք



3

Ֆինանսական հաշվետվություններ

Ֆինանսական արդյունքների ամփոփում 12

Ֆինանսական հաշվետվություններ 14

Ֆինանսական արդյունքների ամփոփում

Ընդամենը ակտիվներ (մլրդ ՀՀ դրամ)



Հաճախորդներին տրված վարկեր ու փոխառություններ (մլրդ ՀՀ դրամ)



Ընդամենը պարտավորություններ (մլրդ ՀՀ դրամ)



Վարկային պորտֆելի աճի տեմպ



Ընդամենը կապիտալ (մլրդ ՀՀ դրամ)



Վարկային պորտֆելի կառուցվածք %



Ֆինանսական արդյունքների ամփոփում

Տոկոսային եկամուտ (մլն ՀՀ դրամ)



Զուտ տոկոսային եկամուտ (մլն ՀՀ դրամ)



Միջնորդավճարների և այլ վճարների եկամուտ (մլն ՀՀ դրամ)



Գործառնական եկամուտ (մլրդ ՀՀ դրամ)



Շահույթ հարկումից հետո (մլրդ ՀՀ դրամ)



*Տարեկան ցուցանիշները արտացոլում են արտաքին աուդիտորական կազմակերպության կողմից ստուգված տվյալները:

Ֆինանսական հաշվետվություններ

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ֆինանսական արդյունքների մասին
«30» Հունիսի 2023 թ.

«ԱյԴի Բանկ» ՓԲԸ ՀՀ, ք. Երևան, Վարդանանց փող 13
(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ծանոթագրություններ	01/04/2023 - 30/06/2023	01/01/2023- 30/06/2023	01/04/2022 - 30/06/2022	01/01/2022 - 30/06/2022
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	3	6,282,518	12,101,701	4,663,994	9,085,644
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	3	(1,657,719)	(3,297,846)	(1,763,391)	(3,614,559)
Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ		**4,624,799**	**8,803,855**	**2,900,603**	**5,471,085**
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտներ	4	2,467,817	4,701,405	1,381,598	2,457,102
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով ծախսեր	4	(1,647,322)	(3,081,194)	(750,818)	(1,281,092)
Ստացված զուտ միջնորդավճարներ և այլ վճարներ		**820,495**	**1,620,211**	**630,780**	**1,176,010**
Զուտ եկամուտ առևտրային գործառնություններից	5	1,720,328	3,713,177	5,449,047	6,494,859
Այլ գործառնական եկամուտներ	6	111,150	298,693	138,737	233,847
Գործառնական եկամուտներ		**7,276,772**	**14,435,936**	**9,119,167**	**13,375,801**
Կորուստներ արժեզրկումից	7	115,926	(65,691)	(586,730)	(509,280)
Ընդհանուր վարչական ծախսեր	8	(2,216,217)	(4,635,227)	(2,101,015)	(4,001,008)
Այլ գործառնական ծախսեր	9	(191,279)	(389,305)	(537,532)	(1,122,791)
Շահույթ/ (վնաս) մինչև հարկումը		**4,985,202**	**9,345,713**	**5,893,890**	**7,742,722**
Շահութահարկի գծով (ծախս)/փոխհատուցում	10	(939,395)	(1,781,577)	(1,105,385)	(1,503,786)
Ժամանակաշրջանի զուտ շահույթ		**4,045,807**	**7,564,136**	**4,788,505**	**6,238,936**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		**228,263**	**359,016**	**(35,229)**	**(462,459)**
Ֆինանսական արդյունքներ փոխանցված զուտ օգուտ (վնաս)		103,740	104,083	59,012	58,006
Իրական արժեքի փոփոխությունից չվաստակած զուտ օգուտ (վնաս)		166,256	333,742	(114,456)	(635,294)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքին վերաբերվող բաղկացուցիչ մասի շահութահարկ		(41,733)	(78,809)	20,215	114,829
Համապարփակ ֆինանսական արդյունք		**4,274,070**	**7,923,152**	**4,753,276**	**5,776,477**
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ	11	5.9	11.1	7.1	9.2
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նոսրացված շահույթ	11	5.9	11.1	7.1	9.2

Հաշվետվության վավերացման ամսաթիվը *14/07/23*

Վարչության նախագահի փոխարինող-Ռիսկերի կառավարման գծով տնօրեն՝ Ռաֆիկ Սուվարյան

Գլխավոր հաշվապահի տեղական՝ Անուշ Հովհաննիսյան

Ֆինանսական հաշվետվություններ

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ֆինանսական վիճակի մասին
«30» Հունիսի 2023 թ.

«ԱԴԻ Բանկ» ՓԲԸ ՀՀ, ք. Երևան, Վարդանանց փող 13
(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ծանոթագրություններ	30/06/23	31/12/2022թ. (ստուգված)
Ակտիվներ			
Կանխիկ դրամական միջոցներ		12,158,334	10,150,777
ՀՀ կենտրոնական բանկում տեղաբաշխված միջոցներ	12	32,355,443	35,455,888
Պահանջներ բանկերի նկատմամբ	13	27,806,410	24,362,809
Շահույթ/վնասով վերարժևորվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ	14	448,223	351,121
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	15	6,541,918	6,076,072
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	16	128,745,777	126,145,867
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	17	9,833,978	7,804,552
Ամորտիզացված արժեքով հաշվառվող այլ ֆինանսական ակտիվներ	18	47,701,092	69,479,481
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	19	9,821,560	9,551,656
Բռնագանձված ակտիվներ	20	2,729,565	3,098,462
Այլ ակտիվներ	21	12,499,951	6,879,638
Ընդամենը՝ ակտիվներ		***318,637,116***	***309,005,760***
Պարտավորություններ			
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	22	13,137,059	10,749,481
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	23	209,017,677	209,639,478
Այլ փոխառություններ	24	10,243,130	8,460,435
Բանկի կողմից թողարկված արժեթղթեր	25	13,719,260	12,895,735
Հետաձգված հարկային պարտավորություններ	26	745,237	342,208
Այլ պարտավորություններ	27	5,179,532	8,246,354
Ընդամենը՝ պարտավորություններ		***252,041,895***	***250,333,691***
Կապիտալ			
Կանոնադրական կապիտալ	28	33,971,850	33,971,850
Էմիսիոն եկամուտ		5,014,099	5,014,099
Պահուստներ՝		293,171	(65,845)
Գլխավոր պահուստ		107,760	107,760
Հիմնական միջոցների վերագնահատման պահուստ		96,918	96,918
Իրական արժեքով չափվող ֆին. ակտիվների վերագնահատ. պահուստ		88,493	(270,523)
Չբաշխված շահույթ (վնաս)		27,316,101	19,751,965
Ընդամենը՝ կապիտալ		66,595,221	58,672,069
Ընդամենը՝ պարտավորություններ և կապիտալ		***318,637,116***	***309,005,760***

Վարչության նախագահի փոխարինող-Ռիսկերի կառավարման գծով տնօրեն՝ Ռաֆիկ Սուվարյան

Գլխավոր հաշվապահի տեղական՝ Անուշ Հովհաննիսյան

Ֆինանսական հաշվետվություններ

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Դրամական միջոցների հոսքերի մասին

«30» Հունիսի 2023 թ.

«ԱյԴի Բանկ» ՓԲԸ ՀՀ, ք. Երևան, Վարդանանց փող 13

(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Նախորդ ժամանակաշրջան 01/01/22-ից 30/06/22թ.	Հաշվետու ժամանակաշրջան 01/01/23-ից 30/06/23թ.
1. Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից		
Դրամական միջոցների զուտ հոսքեր մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունը	**11,387,645**	**13,097,821**
Ստացված տոկոսներ	9,521,534	12,864,454
Վճարված տոկոսներ	(3,285,918)	(2,042,169)
Ստացված կոմիսիոն գումարներ	2,457,102	4,701,405
Վճարված կոմիսիոն գումարներ	(1,281,092)	(3,081,194)
Արտարժույթի առք ու վաճառքի գործառնություններից օգուտ/(վնաս)	6,905,576	3,965,177
Նախկինում դուրս գրված ակտիվների վերադարձ	1,522,585	1,460,520
Վճարված աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ	(2,680,967)	(3,357,189)
Գործառնական գործունեությունից ստացված այլ եկամուտներ և վճարված այլ ծախսեր	(1,771,175)	(1,413,183)
Դրամական հոսքեր գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխություններից	**6,050,562**	**(25,455,336)**
Գործառնական ակտիվներում նվազում/ (ավելացում)	(25,753,868)	(27,596,914)
այդ թվում՝ վարկերի և փոխատվությունների նվազում/ (ավելացում)	(16,647,265)	(29,892,155)
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող արժեթղթերի նվազում (ավելացում)	(1,340,003)	(1,960,109)
այլ գործառնական ակտիվների նվազում/(ավելացում)	(7,766,600)	4,255,350
Գործառնական պարտավորությունների ավելացում (նվազում)	31,804,430	2,141,578
այդ թվում՝ հաճախորդների նկատմամբ պարտավորությունների ավելացում/(նվազում)	45,949,665	4,817,796
այլ գործառնական պարտավորությունների ավելացում/(նվազում)	(14,145,235)	(2,676,218)
Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից մինչև շահութահարկի վճարումը	**17,438,207**	**(12,357,515)**
Վճարված շահութահարկ	(569,844)	(3,915,553)
Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից	**16,868,363**	**(16,273,068)**
2. Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից	**x**	**x**
Այլ ֆինանսական ակտիվներում ներդրումների նվազում (ավելացում)	(2,880,444)	21,044,080
Հիմնական միջոցներում և ոչ նյութական ակտիվներում կապիտալ ներդրումների նվազում (ավելացում)	(8,645)	(7,521)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների (ձեռքբերում) օտարում	(577,165)	(957,448)
Զուտ դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից	**(3,466,254)**	**20,364,898**
3. Դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից	**x**	**x**
Բանկերից ստացված փոխառությունների ավելացում (նվազում)	1,803,190	2,290,558
Բանկի կողմից թողարկված արժեթղթերի ավելացում (նվազում)	2,677,735	889,535
Զուտ դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից	**4,480,925**	**3,180,093**
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(3,555,838)	(1,104,200)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)	**14,327,196**	**6,167,723**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում	22,987,734	51,477,786
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջում	**37,314,930**	**57,645,509**

Հաշվետվության վավերացման ամսաթիվը *14/07/23*

Վարչության նախագահի փոխարինող-Ռիսկերի կառավարման գծով տնօրեն՝ Ռաֆիկ Սուվարյան

Գլխավոր հաշվապահի տեղական՝ Անուշ Հովհաննիսյան

Ֆինանսական հաշվետվություններ

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին

«30» Հունիսի 2023 թ.

«ԱյԴի Բանկ» ՓԲԸ ՀՀ, ք. Երևան, Վարդանանց փող 13

(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Կանոնադրական կապիտալ	Էմիսիոն եամուտ	Գլխավոր պահուստ	Հիմնական միջոցների վերագնահատման պահուստ	Իրական արժեքով՝ այլ համ ֆին արդ միջ չափվող ֆին ակտիվների վերագ պահուստ	Չբաշխված շահույթ (վնաս)	*Ընդամենը կապիտալ*
Նախորդ ֆինանսական տարվա համադրելի միջանկյալ ժամանակաշրջան (տարվա սկզբից աճողական)							
Մնացորդը 2022թ. հունվարի 1-ի դրությամբ (ստուգված)	33,971,850	5,014,099	107,760	105,601	255,029	6,226,827	***45,681,166***
Տարվա շահույթ (վնաս)	-	-	-	-	-	6,238,936	***6,238,936***
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	-	***(462,459)***	-	***(462,459)***
Ֆինանսական արդյունքներ փոխանցված զուտ օգուտ (վնաս)	-	-	-	-	58,006		***58,006***
Իրական արժեքի փոփոխությունից չվաստակած զուտ օգուտ (վնաս)	-	-	-	-	(635,294)	-	***(635,294)***
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքին վերաբերվող բաղկացուցիչ մասի շահութահարկ	-	-	-	-	114,829	-	***114,829***
Մնացորդը 2022թ. հունիսի 30-ի դրությամբ *(չստուգված)*	***33,971,850***	***5,014,099***	***107,760***	***105,601***	***(207,430)***	***12,465,763***	***51,457,643***
Ընթացիկ տարվա միջանկյալ ժամանակաշրջան (տարվա սկզբից աճողական)							
Մնացորդը 2023թ. հունվարի 1-ի դրությամբ (ստուգված)	33,971,850	5,014,099	107,760	96,918	(270,523	19,751,965	***58,672,069***
Տարվա շահույթ (վնաս)	-	-	-	-	-	7,564,136	***7,564,136***
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	-	***359,016***	-	***359,016***
Ֆինանսական արդյունքներ փոխանցված զուտ օգուտ (վնաս)	-	-	-	-	104,083		***104,083***
Իրական արժեքի փոփոխությունից չվաստակած զուտ օգուտ (վնաս)	-	-	-	-	333,742	-	***333,742***
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքին վերաբերվող բաղկացուցիչ մասի շահութահարկ	-	-	-	-	(78,809)	-	***(78,809)***
Մնացորդը 2023թ. հունիսի 30-ի դրությամբ (չստուգված)	***33,971,850***	***5,014,099***	***107,760***	***96,918***	***88,493***	***27,316,101***	***66,595,221***

Վարչության նախագահի փոխարինող-Ռիսկերի կառավարման գծով տնօրեն՝ Ռաֆիկ Սուվարյան

Գլխավոր հաշվապահի տեղական՝ Անուշ Հովհաննիսյան

4

Ռազմավարական հաշվետվություն

Ռազմավարական ծրագրերի իրագործում 19

Կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն 20

Ռազմավարական ծրագրերի իրագործում

Idram&IDBank -ը հայկական առաջատար թվային էկոհամակարգն է թվային բանկինգի, վճարային և ֆինանսական ծառայությունների ոլորտում

550,000+ օգտատեր՝
Հայաստանի տնտեսապես ակտիվ բնակչության 40%-ը

Թվային **բանկինգի լիարժեք ֆունկցիոնալություն**

Հեռավար գրանցում և հաճախորդների նույնականացում
սմարթֆոնի միջոցով

16 բանկերի և 18 վարկային հաստատությունների համար վճարային ագրեգատոր,
համագործակցություն 1000+ ծառայություններ մատուցողների հետ, ներառյալ. երկրի բոլոր հիմնական առցանց ծառայությունները և հանրային ծառայությունները

Անհպում QR վճարումներ 16200+ ֆիզիկական վաճառակետերում,
ներառյալ. սուպերմարկետներ, ռեստորաններ, սրճարաններ, խանութներ, հյուրանոցներ և այլն

Ապահով վճարում
Հայաստանի **ավելի քան 900 առցանց խանութներում web QR -ի և բջջային դրամապանակի միջոցով**

Ինտեգրված **ստացիր հիմա վճարիր հետո** լուծումը առցանց և QR վճարման տարբերակով գնումների և ծառայությունների համար՝ **16,200+ POS-ով,** ներառյալ **5,900+ POS, որը տրամադրում է մինչև 6 ամիս Rocket line 0% անտոկոս վճարման հնարավորություն**

360,000+ ակտիվ քարտեր

Առաջատարը Հայաստանում՝ VISA քարտերի թողարկման ոլորտում

P2P ակնթարթային դրամական փոխանցում հեռախոսահամարով և քարտի համարով
Հայաստանում և արտերկրում

Idram Junior – Հայաստանում երեխաների և դեռահասների համար նախատեսված առաջին ֆինանսական հավելվածը՝ անհպում QR վճարումների և փոխանցումների ֆունկցիոնալությամբ

Id+ հավատարմության թվային հարթակ վիրտուալ բոնուսային և նվեր քարտերով **առևտրով զբաղվողների և օգտատերերի համար, ինչպես նաև բոնուսային փոխանակում (աճուրդ)**

Կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն

«Մի դրամի ուժը» ծրագրի ամփոփում

«Մի դրամի ուժը» Իդրամ ընկերության ԿՍՊ ծրագիրն է, որին միացել է նաև IDBank-ը: Ծրագիրն ուղղված է աջակցելու Հայաստանում կենսական և ռազմավարական կարևորություն ունեցող մի շարք ոլորտների զարգացմանը՝ առողջապահություն, կրթություն, կանաչ տնտեսություն, միջավայրի պահպանություն, սոցիալական պատասխանատվություն և հանրային անվտանգություն:

2020թ. հունիսի 5-ից սկսած Իդրամ հավելվածով, կայքով և տերմինալների միջոցով, իսկ այնուհետև նաև idbanking.am առցանց հարթակի և IDBank-ի տերմինալների միջոցով հաճախորդների կողմից կատարված բոլոր տեսակի վճարումներից «Մի դրամի ուժը» ծրագրին տրամադրվում է 1 ՀՀ դրամ:

- 2023թ. հունվար ամսվա շահառուն «Տալենտում» ծրագիրն է: Ծրագրի նպատակն է բացահայտել տաղանդավոր երաժիշտներին, կրթել ու զարգացնել նրանց և արդյունքում ունենալ միջազգային չափանիշներին համապատասխան երաժիշտներ, որոնք կներկայացնեն հայկական մշակույթն ամբողջ աշխարհում: Ծրագրի ավարտին «Տալենտում» կրթական ծրագրին փոխանցվեց 3.008.215 դրամ:

- «Մի դրամի ուժը» նախաձեռնության փետրվար և մարտ ամիսների ընթացքում ընկերությունների հարթակներով կատարվող վճարումների արդյունքում հավաքված ողջ գումարը՝ 6.463.511 դրամ, ուղղվեց Արցախի գյուղական բնակավայրերի բնակիչների մասնավոր տնային տնտեսություններում արևային ջրաջեռուցիչների տեղադրմանը:

- «Մի դրամի ուժը» նախաձեռնության ապրիլ ամսվա գումարը՝ 3.389.788 դրամ, հատկացվել է Պատերազմի մասնակիցների մասնագիտական ներուժի բացահայտման ծրագրին, որն օգնում է պատերազմի ընթացքում վիրավորում ստացած, ՀՀ մարզերում բնակվող զինվորներին ստանալ անհրաժեշտ գիտելիքներ և կիրառել դրանք իրենց երազանքների ու մտքերի իրականացման նպատակով:

- «Մի դրամի ուժը» նախաձեռնության շրջանակում մայիս ամսվա ընթացքում կուտակված ողջ գումարը՝ 3.520.698 դրամ, փոխանցվել է «Կյանքի ճանապարհ» հասարակական կազմակերպության էպիլեպսիա և այլ բարդ նյարդային հիվանդություններ ունեցող երեխաների բուժման ծրագրին՝ ապահովելով նրանց անհրաժեշտ ախտորոշիչ հետազոտություններով և ժամանակակից դեղամիջոցներով:

- Մի դրամի ուժը նախաձեռնության հունիս ամսվա ընթացքում կուտակված գումարն ուղղվեց Հայորդի ամենամյա ճամբարի տարածքի բարեկարգմանն ու կահավորման աշխատանքներին: Հունիս ամսվա ավարտին ճամբարին փոխանցվեց 3.482.779 դրամ:

5 Ռիսկերի կառավարում

Հիմնական տնտեսական նորմատիվներ 22
Ռիսկերի կառավարման հիմնական մոտեցումներ 23

Հիմնական տնտեսական նորմատիվներ

Բանկի ֆինանսական կայունությունը բնութագրող երկու ցուցանիշները՝ կապիտալի համարժեքությունը և իրացվելիությունը, գտնվում են պահանջվող նվազագույն մեծությունից բարձր մակարդակում:

2023թ.-ի հունիսին կապիտալի համարժեքության նորմատիվը՝ հաշվարկված նոր մոտեցմամբ, կազմել է՝ 26.2% (պահանջվող նվազագույն մեծությունը 11% է), իսկ ընդհանուր և ընթացիկ իրացվելիության նորմատիվները՝ համապատասխանաբար 37.6% և 75.9% (պահանջվող նվազագույն մեծությունները համապատասխանաբար 15% և 60% են):

Կապիտալի համարժեքության նորմատիվ Ն1(2)



Ընդհանուր իրացվելիության նորմատիվ Ն2(1)



Ընթացիկ իրացվելիության նորմատիվ Ն2(2)



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ, IDBank

Ռիսկերի կառավարման հիմնական մոտեցումները

Վարկային ռիսկի կառավարում

Վարկավորման գործընթացում առաջացող ռիսկերի զսպման նպատակով Բանկը վարկավորման գործընթացի հիմքում դնում է հետևյալ սկզբունքները՝

- ✓ վարկի նպատակայնության և մարման աղբյուրների առկայությունը
- ✓ գրավի առարկան և գրավի առարկայի զգայունությունը տնտեսական և շուկայական զարգացումների նկատմամբ, ինչպես նաև վարկ/գրավ հարաբերակցության սահմանաչափերին համապատասխանությունը
- ✓ պոտենցիալ վարկառուի գործունեության տնտեսական ոլորտի առկա իրավիճակը, այդ ոլորտում դիմորդի գործունեություն ծավալելու ուղղությամբ փորձառությունը, ոլորտում նրա դիրքը, ոլորտի մրցակցության աստիճանը և մրցակցությունը
- ✓ պոտենցիալ վարկառուի գործող բիզնեսի, զուտ համախառն եկամտի կայուն մակարդակի և/կամ դրական վարկային պատմության առկայությունը
- ✓ պոտենցիալ վարկառուի ֆինանսական վիճակը բնութագրող ցուցանիշների սահմանաչափերի սահմանումը

Վարկային ռիսկի կառավարումն իրականացվում է նաև վարկային ռիսկի ախորժակի սահմանմամբ և Բանկի ընդհանուր պորտֆելի ռիսկայնության գնահատմամբ:

Բանկը գտնվում է վարկային ռիսկերի կառավարման շարունակական զարգացման և արդիական մեթոդների ներդրման գործընթացում, մասնավորապես՝ Բանկում ներդրվում են վարկային ռիսկի կառավարման նոր արդիական մոտեցումներ և հաշվողական մոդելներ, մանրածախ վարկավորման գործընթացի սքորինգային համակարգեր, հաճախորդների ռիսկայնության մակարդակների վրա հիմնված վարկերի գնագոյացման համակարգ (Advanced Risk-Based Pricing (RBP) model):

Իրացվելիության ռիսկի կառավարում

Իրացվելիության ռիսկի գնահատման և սահմանափակման համար Բանկը օրական կտրվածքով հաշվարկվում է իրացվելիության հիմնական տնտեսական նորմատիվները, որոնց հիման վրա կայացվում են համապատասխան որոշումներ: Բանկը իրացվելիության ռիսկի կառավարումն իրականացնում է հետևյալ հիմնական մոդելների միջոցով՝

- ✓ Իրացվելիության ճեղքվածքի (GAP) մոդել,
- ✓ Իրացվելիության նորմատիվների վերլուծություն,
- ✓ Սթրես-թեստավորում:

Տոկոսադրույքի ռիսկի կառավարում

Տոկոսադրույքի ռիսկի գնահատման և սահմանափակման համար Բանկը, հաշվի առնելով շուկայում առկա տոկոսադրույքները, կատարում է տոկոսադրույքների գնահատում և համապատասխանեցում շուկայում գործող ցուցանիշներին, մշտապես վերահսկում է տոկոսադրույքի նկատմամբ զգայուն ակտիվների և պարտավորությունների միջև առկա ժամկետայնության ժեղքվածքը, իսկ շուկայական տոկոսադրույքների փոփոխության դեպքում արագ արձագանքելով, նվազագույնի է հասցվում փոփոխության արդյունքում Բանկի համար հնարավոր կորուստների ռիսկը:

Արտարժութային ռիսկի կառավարում

Արտարժութային ռիսկի կառավարման հիմնական սկզբունքն է նպաստել Բանկի արտարժութային բաց դիրքերի արդյունավետ կառավարման գործընթացին՝ միաժամանակ հետևելով սահմանված արտարժութային ռիսկի կառավարման նորմատիվային և ուղենիշային ցուցանիշների սահմանաչափերի պահպանմանը:

Գործառնական ռիսկի կառավարում

Գործառնական ռիսկերի հայտնաբերման և դասակարգման համար Բանկն իրականացնում է ռիսկերի ինքնագնահատում, տեղի ունեցած գործառնական պատահարների վերաբերյալ տվյալների բազայի հավաքագրում և խաբեության ռիսկի հայտնաբերում («Կատարված, փոփոխված և հեռացված գործարքների», FPD/SPD/TPD տվյալների մասին հաշվետվությունների և Բանկում իրականացված գործաքների մշտադիտարկման միջոցով):

Մինչ նոր պրոդուկտների, նոր և վերանայվող ներքին իրավական ակտերի, բանկային գործառնությունների, գործողությունների և համակարգերի ներդրումը, Բանկը ԳՌ տեսանկյունից պոտենցիալ ռիսկերի բացահայտման նպատակով, ապահովում է վերջիններիս ուսումնասիրությունը և սահմանում է գործընթացների քայլային հաջորդականությունների ռիսկի հակվածության աստիճանները:

Երկրի ռիսկի կառավարում

Այլ երկրներում գրանցված և/կամ փաստացի գործունեություն իրականացնող կազմակերպությունների հետ ակտիվային գործարքների կնքման, թղթակցային հաշիվների բացման և հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների ստանձնման դեպքերում, տվյալ երկրի հետ առաջին անգամ գործարքի կնքման պահին, ինչպես նաև հետագայում Բանկը գնահատում է տվյալ կազմակերպության երկրի ռիսկը՝ հիմք ընդունելով միջազգային ռեյտինգային ընկերություններից մեկի (Moody's, Standard&Poor's, Fitch) կողմից տվյալ երկրին շնորհված վարկանիշը և ներքին ընթացակարգով սահմանված սահմանաչափերը:

Ռիսկերի կառավարման հիմնական մոտեցումները

Համբավի ռիսկի կառավարում

Կառավարման նպատակն է բացահայտել «ԱյԴի Բանկ» ՓԲԸ բնականոն գործունեության ընթացքում բանկի վերաբերյալ հանրության բացասական կարծիքի առաջացման ուղղությունները և սահմանել Բանկի կողմից համբավի ռիսկի կանխարգելմանը/նվազեցմանն ուղղված միջոցառումների հիմնական ուղղությունները:

Ռազմավարական ռիսկի կառավարում

Ռազմավարական ռիսկի կառավարման հիմնական նպատակն է անհամապատասխան Բիզնես մոդելի որդեգրման արդյունքում առաջացող կամ հնարավոր կորուստները նվազագույնի հասցնելը: Ռազմավարական ռիսկի առաջացման հնարավորությունը բացահայտելու և գնահատելու նպատակով Բանկը ներդնում է չափանիշներ, որոնց կարգավիճակի և մեծության փոփոխությունը նշանակում է Բանկի գործունեության որոշակի ուղղության բնույթի փոփոխություն, և հետևաբար, որակապես այլ բնույթի ռազմավարական ռիսկ կրելու հնարավորություն:

Թվարկված ռիսկերի գծով Բանկում գործող նորմատիվային դաշտը կարգավորվում է IDBank-ի ներքին և ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հաստատված համապատասխան իրավական ակտերով:

30/06/2023թ դրությամբ նորմատիվների գծով խախտումներ առկա չեն:

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԱՆՑ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Սույնով հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն՝

1. IDBank-ի՝ 2023 թվականի առաջին կիսամյակի հաշվետվությունում ներառված տեղեկությունները ճշգրիտ են և լիարժեք, բոլոր էական առումներով համապատասխանում են իրավական ակտերով սահմանված պահանջներին:

2. 2023 թվականի առաջին կիսամյակի աուդիտ չանցած ֆինանսական հաշվետվությունները կազմված են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն և, բոլոր էական առումներով, ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Բանկի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը 2023 թվականի հունիսի 30-ի դրությամբ:

Միեր Աբրահամյան	Վարչության նախագահ
(անուն, ազգանուն)	(պաշտոն)
Արման Ասատրյան	Ֆինանսական տնօրեն, Վարչության անդամ
(անուն, ազգանուն)	(պաշտոն)
Կարեն Նալբանդյան	Բիզնեսի զարգացման տնօրեն, Վարչության անդամ
(անուն, ազգանուն)	(պաշտոն)
Ռաֆիկ Սուվարյան	Ռիսկերի կառավարման գծով տնօրեն, Վարչության անդամ
(անուն, ազգանուն)	(պաշտոն)
Անուշիկ Խաչատրյան	Գլխավոր հաշվապահ, Վարչության անդամ
(անուն, ազգանուն)	(պաշտոն)
Սերգեյ Առաքելյան	Թվային բանկինգի տնօրեն, Վարչության անդամ
(անուն, ազգանուն)	(պաշտոն)
Տիգրան Մխիթարյան	Կորպորատիվ բիզնեսի գծով տնօրեն Վարչության անդամ
(անուն, ազգանուն)	(պաշտոն)
Լիլիթ Գրիգորյան	Գործառնական տնօրեն Վարչության անդամ
(անուն, ազգանուն)	(պաշտոն)